

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾԻ ԱՐԴԻԱԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

ՍԵՐՓԵՅ ՂԱԶԱՐՅԱՆ

*ՀՀ ԳԱՍ Մ. Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի փոխտնօրեն գիտության գծով, տ.գ.դ., պրոֆեսոր*

ԷՂՈՒԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆ

ՀՊԱՀ ամբիոնի վարիչ, տ.գ.դ., պրոֆեսոր

ԱՐԹՈՒՐ ՓԱՇԻՆՅԱՆ

*ՀՀ ԳԱՍ Մ. Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի հայցորդ*

ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

2008 թվականի հուլիսի 1-ի դրությամբ հանրապետությունում արդեն ձևավորվել է շուկայական տնտեսության հարաբերություններով կարգավորվող ազատական տնտեսակարգ, որը ներառում է մոտ 340 հազար գյուղացիական տնտեսություններ, գյուղատնտեսական արտադրությամբ և սպասարկմամբ զբաղվող առևտրային կազմակերպություններ:

Հայաստանի Հանրապետության անկախության հռչակումից հետո անցած ժամանակահատվածում նրա տնտեսությունը կրել է էական փոփոխություններ՝ կապված շուկայական հարաբերությունների արմատավորմանն ուղղված միջոցառումների իրականացման հետ: Այդ միջոցառումների իրականացումը չափազանց կարևոր է գյուղատնտեսության զարգացման համար, որոնցից են՝ արտադրության արդյունավետության բարձրացումը, բնակչության կենսամակարդակի բարելավումը, շուկայական կառուցվածքների ազատ գործունեությունը, աղքատության նվազումը, գյուղացիական տնտեսությունների ամրապնդումն ու զարգացումը:

Հողի սեփականաշնորհումը, դրա հետ կապված բոլոր օրենքների կիրառումն ու ամբողջ գործընթացը վերջին տարիներին բուռն կյանքի նշանակալից արդյունքներից, թերևս, ամենաէականն է հանրապետությունում:

Գյուղացիական տնտեսությունների ստեղծումը մեծ փոփոխություններ առաջ բերեց նաև գյուղական բնակչության շրջանում, երբ սեփականատերերը՝ գյուղացիական տնտեսությունները, իրենք են կառավարում իրենց արտադրական գործունեությունը և աշխատանքի արդյունքով ապահովում իրենց ընտանիքների պահանջները: Փաստորեն, հողի սեփականաշնորհման հետևանքով հանրապետությունում ստեղծվեցին բազմաազգար գյուղացիական տնտեսություններ, որոնցից յուրաքանչյուրին բաժին է ընկնում միջին հաշվով 1.4 հա գյուղատնտեսական հողատեսք, այդ թվում՝ 1.1 հա վարելահող: Ինչ վերաբերում է գյուղացիական կոլեկտիվ տնտեսություններին, որոնց ճնշող մեծամասնությունը լուծարվեց, ապա այստեղ մեկ տնտեսությանը ընկնում է 65.7 հա գյուղատնտեսական հողատեսք, որից 50.4 հա՝ վարելահող: Չեն սեփականաշնորհվել բնական արտոնները:

Մեր ուսումնասիրությունները նույնպես վկայում են, որ փոքր հողակտորների վրա, առավել ևս ձեռքի աշխատանքով, դժվար է ոչ միայն ապրանքային արտադրանք ապահովելը, այլև

ընդհանրապես արդյունավետ արտադրություն կազմակերպելը:

Օրինակ, Գեղարքունիքի մարզում միջին հաշվով մեկ գյուղացիական տնտեսությանը հասնում է 1.7 հա գյուղատնտեսական հողատեսք, որից 1.2 հա՝ վարելահող և 0.5 հա՝ խոտհարք: Հողատերերի ճնշող մեծամասնությունը ստացել է իրարից չափազանց մեծ հեռավորության վրա գտնվող ու խիստ մանր, քվով 4-5, երբեմն նաև օրենքի խախտումով՝ 6 հողակտոր: Հողերի տեղահատկացումն ու փոքր չափերը թույլ չեն տալիս շահութաբեր արտադրություն կազմակերպել:

Հանրապետության առանձին մարզերի գյուղատարածքներում փոքր հողակտորների վրա գյուղատնտեսական տեխնիկայի օգտագործման դժվարությունների հետևանքով, առավել ևս դրանց սպասարկման և շահագործման թանկության պայմաններում, արտադրության գործի կազմակերպման դժվարությունները գյուղացիական տնտեսություն վարողներին հուշում են մտածել և նոր ուղիներ փնտրել՝ արտադրությունը խոշորացնելու և այն մեքենայացնելու համար:

Մեր կողմից կատարված սոցիոլոգիական հետազոտությունների տվյալներն ուսումնասիրվող գյուղերում (Արագածոտնի և Գեղարքունիքի մարզեր) ցույց են տալիս, որ հարցման ենթարկվածների ճնշող մեծամասնությունը նպատակահարմար չի գտնում յուրաքանչյուր գյուղացիական տնտեսության համար առանձին-առանձին տեխնիկա և տրանսպորտային միջոցներ գնել: Ըստ մեր հարցումների՝ գյուղացիների կարծիքով գյուղացիական տնտեսություններում տեխնիկայի արդյունավետ գործունեության համար լավագույն ուղին գյուղատնտեսական աշխատանքների համատեղ կատարումն է:

Մեր ուսումնասիրություններն առանձին մարզերում կատարվել են գյուղացիական տնտեսությունների արտադրական գործունեության, նրանց սոցիալական, հարկային, վարկային, արտադրված մթերքների իրացման, գիտատեղեկատվության, նյութատեխնիկական մատակարարման, ինչպես նաև մի շարք այլ տնտեսագիտական հարցերի վերլուծության ուղղությամբ, որոնք թույլ են տալիս կատարել հետևյալ հակիրճ եզրակացությունները՝

- գիտատեխնիկական քաղաքականության բնագավառում կան բազմաթիվ չլուծված հարցեր, որոնցից ամենագլխավորն այն է, որ գյուղացիական տնտեսություններն անբավարար են ստանում գիտագործնական խորհրդատվություն, և բացակայում է գիտության առաջավոր փորձի ներդրումն այդ տնտեսություններում,
- չափազանց թույլ է արտադրական նոր ենթակառուցվածքների նյութատեխնիկական ու մասնագիտական ապահովման, սպասարկող (արտադրող) և իրացնող (վերամշակող) ճյուղերի ներդաշնակ գործունեության համակարգի գործունեությունը գյուղացիական տնտեսություններում,
- ՀՀ մարզերի առումով դեռևս չի ստեղծվել գիտական նվաճումների ներդրման համակարգ, որում ակտիվ դեր ունեն կատարելու գյուղատնտեսության համակարգի գիտական կենտրոնները՝ իրենց գիտափորձարարական բաժանմունքներով,
- հանրապետության մարզայետարանները պետք է ունենան համատեղ մշակված ծրագրեր գյուղերի սոցիալական զարգացման, աշխատանքային ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, մասնագիտական սպասարկումների ստեղծման, կոոպերացիայի զարգացման ուղղությամբ,
- չնայած գյուղատնտեսական մթերքների ապրանքային արտադրության հիմնական մասն ապահովում են գյուղացիական տնտեսությունները, այնուհանդերձ, այն բավարար համարել չի կարելի,
- գյուղական բնակչության սոցիալ-տնտեսական վիճակը լուրջ բարելավման կարիք ունի:

Հանրապետության առանձին մարզերում և գոտիներում դեռ կան գյուղատնտեսական շրջանառության մեջ մտցնելու ենթակա բավականին հողեր: Հողային հետազոտությունները վկայում են, որ հանրապետությունում այդպիսի տարածքներից մոտ 100 հազ. հեկտարից ավելի

հողեր ենթակա են յուրացման: Այդ տարածքների յուրացումը կարելի է իրականացնել գլխավորապես Արարատյան հարթավայրի աղակալած հողերի քիմիական մելիորացման և նախալեռնային գոտու հողերի յուրացման, ինչպես նաև հանրապետության բոլոր մարզերում առկա թեթևությունների վրայի հողերի և խախտված հողերի վերականգնման միջոցով:

Հանրապետությունում արդեն ուսումնասիրվել է զարգացած երկրների անցած ուղին և, ելնելով մեր ազգային, ինչպես նաև բնակլիմայական, աշխարհագրական յուրահատկություններից և ունեցած արտադրական ներուժից, փաստորեն, սկսել է ընթանալ իր յուրօրինակ ուղիով:

Վերադառնալով գյուղացիական տնտեսությունների գործունեության ու հետագա զարգացման հարցերին, անհրաժեշտ է նշել, որ շուկայական հարաբերությունների զարգացման ընթացքում, տնտեսությունը վարելով գիտական հիմունքներով, նրանում անընդհատ պետք է ավելացվի ապրանքային արտադրությունը, որը շուկայական հարաբերությունների հիմքն է:

Ելքը մենք տեսնում ենք բազմաազար գյուղացիական տնտեսությունների հետագա խոշորացման հիման վրա ֆերմերային խոր մասնագիտացված ապրանքային տնտեսությունների կազմակերպման մեջ: Այլ կերպ ասած, խոսքը գյուղացիական տնտեսությունների վերակառուցման և ժամանակակից ձևի ու մակարդակի տնտեսությունների կազմավորման մասին է:

Այստեղ մեծ կարևորություն են ստանում արտադրության խոշորացումը, տնտեսությունների օպտիմալ չափերն ու մասնագիտացումը, կոոպերացիայի զարգացումը, գիտատեխնիկական առաջընթացի ապահովումը, իրավական դաշտի, համակարգի կառավարման ու մարքեթինգի կատարելագործումը, գյուղատնտեսական արտադրության գիտական ապահովումը, գյուղի սոցիալական վիճակի բարելավումը և այլ կարևորագույն միջոցառումների իրականացումը:

Ունենալով փոքր հողակտորներ՝ մի քանի տեղ ցրված ու տրոհված վարելահողերով, չունենալով այդ պայմաններին հարմար արտադրության համապատասխան միջոցներ, արտադրությունը վարելով հաճախ ձեռքի ուժով և պարզունակ գործիքներով, մերկայիս գյուղացիական տնտեսությունը գերազանցապես կրում է տիպիկ բնամթերային բնույթ, որը բազմաճյուղ է ու ձգտում է կազմակերպել իր՝ ընտանեկան կարիքների համար անհրաժեշտ մթերքների արտադրությունը, և նոր, այդ արտադրանքի ավելցուկը հանում է ներքին շուկա՝ իրացման:

Գյուղատնտեսական արտադրության արդյունավետության բարձրացման գործընթացում մեծ է կոոպերացիայի դերը, և այդ ուղղությամբ կատարվող ուսումնասիրություններն արդիական են ու բխում են հանրապետության ագրոպարենային համակարգի ներկա պայմաններից: Կոոպերացիայի զարգացման անհրաժեշտությունը հրատապ է, որի համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է՝

- մշակել գյուղատնտեսական կոոպերացիայի զարգացման և բոլոր տեսակի ներդրումների պետական միասնական ծրագիր՝ դրանում ընդգրկելով գյուղում եղած սեփականության բոլոր ձևերը, գյուղական բնակչությանը, ոչ գյուղատնտեսական ճյուղերի ձեռնարկությունները,
- մշակել և ընդունել համապատասխան օրենքներ՝ վարկային կոոպերատիվների ստեղծման և դրանց հետագա գործունեության կարգավորման վերաբերյալ, այդ կոոպերատիվներին վերապահելով լայն իրավունքներ, հատկապես ներդրումների տնօրինման հարցում, ինչպես նաև որոշակի ժամանակահատվածում (ասենք՝ 5 տարի) ազատելով նրանց ամեն տեսակի հարկումից,
- ստեղծել գյուղացիական կոոպերատիվների միություն՝ դրա աշխատանքները զուգակցելով արդեն գործող գյուղացիական միության հետ՝ նկատի ունենալով, որ կոոպերատիվների միության կազմակերպմամբ ՀՀ գյուղատնտեսության նախարարության որոշ գործառույթներ կարող են փոխանցվել դրան: Կոոպերատիվների ձևավորման մեկնարկային փուլում ապահովել պետության ակտիվ մասնակցությունը՝ ակնկալելով բյուջեից որոշակի

հատկացումներ: Նման մոտեցումը հնարավորություն կընձեռի սատարելու կոռուպցիոն տիպների համակարգված ձևավորմանը,

- ի հաշիվ բյուջետային, արտաբյուջետային, ինչպես նաև կոռուպցիոն տիպների արտադրաֆինանսական գործունեությունից գոյացած սեփական միջոցների՝ ստեղծել գյուղացիական կոռուպցիոն տիպների աջակցության կենտրոնական հիմնադրամ,
- յուրաքանչյուր մարզում վերոհիշյալ հիմնադրամի, ինչպես նաև առանձին կոռուպցիոն տիպների սեփական միջոցների հաշվին կազմակերպել խորհրդատվական կենտրոններ՝ լայնորեն օգտագործելով համակարգի գիտահետազոտական կենտրոնների, ինստիտուտների և այլ գիտական ստորաբաժանումների գիտական ներուժը, ակնկալելով պայմանագրային հիմունքներով բիզնես ծրագրերի կազմում զանազան ծառայությունների մատուցում,
- գյուղատնտեսության ոլորտում կոռուպցիոն տիպների ընդլայնված ցանց ստեղծելու համար ուղղորդված կապիտալի ներհոսքին առավելագույնս նպաստելու նպատակով ներդրված միջոցները որոշակի ժամկետով ազատել հարկումից, այդ թվում՝ ավելացված արժեքի հարկից:

Նկատի ունենալով, որ կոռուպցիան ժամանակակից շուկայական տնտեսավարման արդյունավետ ձևերից մեկն է, հանրապետության տնտեսության ագրարային հատվածի տնտեսական բարեփոխումների համակարգում կարևորագույն դեր պետք է հատկացնել տնտեսավարման կոռուպցիոն տիպի ձևին, որը հնարավորություն կտա իր մեջ շաղկապել անհատական, կոլեկտիվ և հասարակական շահերը, տնտեսավարող սուբյեկտների համար պայմաններ ստեղծել ինքնուրույնության, գործարարության և նախաձեռնության դրսևորման համար:

Գյուղատնտեսության ոլորտում կոռուպցիան գյուղացիական տնտեսություն վարելու ավելի կատարյալ և արդյունավետ ձև է, որի ժամանակ հնարավորություններ են ստեղծվում մանր ապրանքարտադրողների համար՝ պահպանելու իրենց ինքնուրույնությունը և ստանալու համապատասխան սպասարկում: Փաստորեն այդպիսի կոռուպցիայի նպատակն է օգնել գյուղացիներին, համախմբել նրանց ուժերը, որի շնորհիվ փոքր տնտեսությունները միավորելով՝ կստանան տնտեսական ուժ և խոշոր տնտեսություններին հատուկ բոլոր առավելությունները:

Ի վերջո, ոլորտում կոռուպցիոն տիպների ձևավորումը հնարավորություն կստեղծի համատեղ օգտագործելու արտադրության տեխնիկական միջոցները, արդյունավետ կազմակերպելու գյուղմթերքների վերամշակումն ու իրացումը, որի արդյունքում կոռուպցիոն տիպի անդամները կստանան ինչպես տնտեսական մեծ օգուտ, այնպես էլ կձգտեն իրենց տնտեսությունը հասցնել ավելի բարձր տեխնիկական ու տեխնոլոգիական մակարդակի:

Հատկանշական է, որ հողային բարեփոխումների իրականացման առաջին փուլի արդյունքում առաջացավ ներքին և արտաքին շուկային միտված ապրանքային խոշոր արտադրություն կազմակերպելու նոր հիմնախնդիր: Ըստ երևույթին, գյուղական համայնքի շերտավորմանը զուգընթաց, կընթանա գյուղացիական տնտեսությունների մի մասի խոշորացում, ապա գյուղացիական ապրանքային, ֆերմերային տիպի խոշոր տնտեսությունների ձևավորում՝ ի հաշիվ թույլ տնտեսությունների, որը կհանգեցնի գյուղում ազատ բանուժի առաջացման և վարձու աշխատանքի կիրառման, կառաջանա շուկա: Նշվածը և գյուղում տեղի ունեցող մյուս գործընթացներն օրգանապես կապված են հանրապետությունում ագրարային շուկայի ձևավորման ու գործունեության հետ: Հենց այդ շուկայի զարգացումը կարող է բխել գյուղացիական տնտեսությունների խոշորացման երկարատև գործընթացից, որը պետք է գտնվի ՀՀ կառավարության ուշադրության կենտրոնում:

Այնուհետև, կարևոր է ամրապնդել տնտեսությունների հետագա տեխնիկական վերազինումը, մեքենայական տեխնիկայի ներդրումը և էլեկտրաֆիկացումը, ինչպես նաև՝ էլեկտրոնային տեխնիկայի կիրառումը:

Այս ամենից հետո, բնականաբար, կառաջանան ֆերմերային խոշոր տնտեսություններ, ինքնակառավարման, գործունեության կոորդինացման, ժողովրդավարական հիմունքներով ձևավորված միավորումներ, ընկերակցություններ (ասոցիացիաներ), միություններ և այլն:

Այս զարգացմանը զուգընթաց կկազմավորվեն համապատասխան արտադրական, սոցիալական ենթակառուցվածքներ, աստիճանաբար կբարելավվեն արտադրության նյութատեխնիկական ապահովման համակարգը, ինչպես նաև ֆերմերային տնտեսությունների արտադրանքի իրացման բոլոր օղակները՝ առաքում, շուկա, վերամշակող ու պահպանող ձեռնարկություններ: Ագրարային ոլորտի բնականոն զարգացման ապահովումը շատ բանով կախված կլինի նաև արտադրող, մատակարարող, իրացնող ու վերամշակող ոլորտների ներդաշնակ աշխատանքից:

Միաժամանակ կբարելավվի հողօգտագործման ամբողջ գործընթացը, կվերանան ավելորդ սահմաններն ու ճանապարհները, կկանոնավորվի ոռոգման համակարգը, կառաջանան համեմատաբար խոշոր դաշտեր ու այգիներ՝ համապատասխան ցանքաշրջանառություններով ու արտադրության մեքենայացմամբ: Արտադրության խոշոր չափերը կստեղծեն բարենպաստ պայմաններ արտադրական ենթակառուցվածքի ու միջնորդ օղակների աշխուժացման համար, էապես կնպաստեն վերամշակող, սառնարանային և առևտրատնտեսական ձեռնարկությունների գործունեության կարգավորմանը:

Ի վերջո, կխթանվեն ագրոշուկայի ձևավորումն ու զարգացումը, որն իր հերթին կնպաստի արտաքին շուկայի հետ հարաբերությունների կարգավորմանը, կստեղծվեն բարենպաստ պայմաններ՝ տեղական ու արտասահմանյան գործարարների կողմից հանրապետության ագրարային ոլորտում ներդրումներ կատարելու համար: Գյուղում կստեղծվի նոր սոցիալ-տնտեսական իրավիճակ, հիմնականում կլուծվեն գյուղական բնակչության զբաղվածության հիմնախնդիրները:

Հանրապետությունում մոտակա հեռանկարում բոլոր դեպքերում առավել նախընտրելի կլինեն ֆերմերային այնպիսի տնտեսությունները, որոնք կկոոպերացնեն իրենց ջանքերը՝ կիրառելու առավելապես բարձր արտադրողական, մեքենայացված աշխատանքը: Մասնավորապես, առանձին դեպքերում լայնորեն կկիրառվի փոքր տեխնիկան, որը, ձևավորվող, ճիշտ է՝ կոոպերացված, սակայն համեմատաբար փոքր արտադրության ծավալների դեպքում առավել նախընտրելի է:

Ներկայումս հանրապետությունը գտնվում է տնտեսական բարեփոխումների խորացման և շուկայական տնտեսության ձևավորման փուլում: Աստիճանաբար ձևավորվում է հողի շուկան, շարունակվում է գյուղատնտեսության սպասարկման, գյուղնթերքների վերամշակման ու իրացման ոլորտների ակտիվացման գործընթացը, պետության կողմից ձևավորվում են համապատասխան իրավական դաշտ և անհրաժեշտ տնտեսական կառուցակարգեր: Իհարկե, շատ բան է կախված նաև շուկայի թելադրանքից:

Գիտատեխնիկական առաջընթացը մեծ թափով պետք է մուտք գործի նաև գյուղ: Ագրարային ոլորտում գիտական ներուժի առկայությունը իրական նախադրյալ է և՛ տնտեսական աճի, և՛ սոցիալական զարգացման, և՛ տեխնոլոգիական առաջընթացի զարգացման համար:

Գյուղացիական տնտեսություններում արտադրությունը ներկայումս հասել է մի այնպիսի մակարդակի, որ այդ տնտեսությունների՝ վաղվա ֆերմերային տնտեսությունների ձևավորումը հնարավոր չէ առանց խոր, բազմակողմանի և գիտականորեն հիմնավորված միջոցառումների իրականացման: Իսկ գիտության, հատկապես ագրարային տնտեսագիտության դերը՝ որպես հասարակության անմիջական արտադրողական ուժի, իբրև ազգային տնտեսության արդյունավետության բարձրացման վճռորոշ գործոնի, տարեցտարի բարձրանում է:

Մեր հանրապետությունը կառուցում է նոր հասարակարգ, որը կկարողանա ապահովել երկրի տնտեսության անընդհատ զարգացում, բնակչության բարձր կենսամակարդակ: Այդ նպատակով օգտագործվում են տարբեր մոտեցումներ՝ ընտրելով դրա ճիշտ ճանապարհը, ինչպես մեր հասարակության զարգացման մանրագնին հետազոտության և հետազա զարգացման

միտումների կանխատեսման, այնպես էլ հանրապետության բնակչության կենսոլորտի առանձնահատկությունների հաշվառման ու տնտեսության զարգացման կայուն ծրագրերի մշակման և իրականացման միջոցով՝ դնելով այդ ծրագրերը հասարակության ձևավորման ռազմավարության ու պետության տնտեսական քաղաքականության հիմքում:

Հայաստանում ֆերմերային տնտեսությունների նախատիպ գյուղացիական տնտեսություններն ունեն զարգանալու և հզորանալու հնարավորություններ, սակայն դրանք այնպես, ինչպես որ կան, այդպիսի վիճակում երկար թողնել չի կարելի:

ՍԵՐԳԵՅ ՂԱԶԱՐՅԱՆ

*ՀՀ ԳԱՄ Մ. Զոքանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի փոխտնօրեն գիտության գծով, տ.գ.դ., պրոֆեսոր*

ՀԵՆՐԻԿ ՄԱՍԻԿՈՆՅԱՆ

ՀՊԱՀ տ.գ.դ., պրոֆեսոր

ՎԱՐԴՈՒՅԻ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՊԱՀ տնտեսագիտության ամբիոնի լաբորանտ

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՅԱՐՄԱՐ ՈՒՂԻՆԵՐԸ

Աշխարհի բոլոր զարգացած երկրների գյուղատնտեսության ոլորտի գործունեության մեջ ընդգրկվել են արտադրության մասնագիտացման և կոոպերացման գործընթացները, որոնք այժմ համաշխարհային տնտեսության գլոբալ զարգացման կարևորագույն գործոններն են ու այդ տեսակետից հանրապետության պարենային ապահովության և անվտանգության հարցերում ծագած մասնագիտացման գործընթացների բարելավում անկասկած, հնարավորություն կարող են ստեղծել՝ գյուղատնտեսությունը վերածելու սեփականության բազմաձևության վրա հիմնված և շուկայական հարաբերություններով կարգավորվող ազգային տնտեսության մի կայուն ու արդյունավետ ճյուղի, ինչպես նաև բարելավելու գյուղատնտեսության վարման համակարգը հանրապետության մարզերում:

Հանրապետության տարածքը գտնվում է ծովի մակերևույթից 369-4095 մ բարձրության վրա, որի բնատնտեսական բազմազանության պայմաններում ձևավորվել են արտադրության բավականին հստակ մասնագիտացված տարածաշրջաններ: Շատ դեպքերում, լեռնային գոտիականության հետևանքով, միևնույն տարածաշրջանի ներսում կտրուկ փոփոխվում են գյուղատնտեսական արտադրության տեղաբաշխման ու մասնագիտացման պայմանները: Չնայած դրան, շրջանների և դրանց մեջ տեղադրված տնտեսությունների ավելի քան 80%-ը ունեցել է արտադրության արտահայտված մասնագիտացում:

Այնուամենայնիվ, սեփականաշնորհումից հետո թուլացել է տնտեսությունների ուշադրությունը մասնագիտացման հարցերի նկատմամբ, որոնք առաջին հերթին պայմանավորված են ճյուղի կառուցվածքային տեղաշարժերով և ճյուղում ու սպառողական շուկայում կոնյունկտուրայի էական տատանումներով: Խախտվել է հարաբերությունը գլխավոր և լրացուցիչ ճյուղերի միջև: Ճյուղում տեղ գտած թերությունները և առաջացած օբյեկտիվ հիմնահարցերը ներկայումս սահմանափակում են հողի, ջրի, տեխնիկայի, քիմիացման, աշխատանքային ռեսուրսների և